ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Բանալի բառեր *– միջնադարյան Հայոց համալսարան, կրթական համակարգ, սքոլաստիկա, սքոլաստիկական հումանիզմ, դավանաբանական պայքար, ազգային ինքնություն*

Լուսավորականների կողմից միջնադարի՝ որպես մութ ու ամուլ դարերի (Dark Ages) մասին առասպելական պատկերացումները կոչված էին հակադրելու Բանականության ու Հավատի դարաշրջանները և նսեմացնելու-անտեսելու այն նվաճումները հատկապես գիտության ու կրթության կազմակերպման ոլորտներում, որոնք ձեռք բերվեցին միջնադարյան գրագետների, սքոլաստիկ մտածողների տքնաջան ու նպատակասլաց աշխատանքի շնորհիվ: Եվրոպական քաղաքակրթությունը միջնադարին պարտական է թեկուզ այն բանի համար, որ դրանից ժառանգել է ***համալսարան, ռեկտոր, ֆակուլտետ, դեկան, դոկտոր, պրոֆեսոր, մագիստրոս, բակալավր, թեզ*** և գիտության ու կրթության հետ կապված այլ եզրույթներ: XIII-XV դդ. եվրոպական երկրներում հիմնադրվեցին տասնյակ համալսարաններ, որոնք էապես փոխեցին եվրոպական մշակույթի դիմապատկերը: Այդ ժամանակահատվածում Հայաստանում ևս հիմնադրվեցին համալսարաններ, որոնք, շարունակելով միջնադարյան հայոց բարձրագույն դպրոցների լավագույն գիտակրթական ավանդույթները, յուրօրինակ ձևերով ու տարբեր անուններով գոյատևեցին շուրջ 150 տարի: Քանի որ հայոց մեջ համալսարանական ավանդույթը տևական ժամանակ չընդհատվեց, ուստի այս առումով ավելի տեղին է օգտագործել միջնադարագետ Ա. Մաթևոսյանի ներմուծած «Միջնադարյան հայոց համալսարան» արտահայտությունը:

Միջնադարյան հայոց համալսարանը հիմնադրվել է 1282 թ. Ներսես Մշեցու ջանքերով, Վայոց ձորի Աղբերց վանք Գլաձորում, գործել է Եսայի Նչեցու գլխավորությամբ մինչև 1338 թ., Տիրատուր Կիլիկեցու ռաբունապետությամբ՝ Հերմոնի վանքում մինչև 1356 թ., Հովհաննես Որոտնեցու ռաբունապետությամբ՝ Որոտնավանք և Ապրակունյաց վանքում՝ մինչև 1386 թ., Գրիգոր Տաթևացու ռաբունապետությամբ՝ Ապրակունյաց վանքում, ապա Տաթևում՝ մինչև 1409 թ., և դրանից հետո ևս մի քանի տասնամյակ՝ մինչև

1435 թ.՝ որպես Գլաձորի, Հերմոնի, Որոտնավանքի, Տաթևի համալսարաններ[1]: Այս համալսարաններից յուրաքանչյուրն իր ավանդը ներդրեց հայոց մշակույթի՝ աստվածաբանության, իմաստասիրության, գիտության, արվեստի ու կրթության զարգացման և հայապահպանության գործում:

Մասնագիտական գրականության մեջ լուսաբանվել են եվրոպական և հայկական համալսարանների կառուցվածքի, կրթական առարկաների, դասավանդման ծրագրերի և այլնի հարցեր, ցույց են տրվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները[2]: Առանձնացնեմ մի կարևոր հանգամանք. ի տարբերություն եվրոպական համալսարանների, որոնց ծնունդը պայմանավորված էր եվրոպական երկրների քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի վերելքով, միջնադարյան Հայոց համալսարանի հիմնադրումը գլխավորապես կապված է եղել պետականության բացակայության պայմաններում ազգային ինքնության՝ մշակութակերպի, կրոնի ու դավանանքի պահպանման հետ: Անկախ իր հիմնադրման շարժառիթից՝ միջնադարյան Հայոց համալսարանը եվրոպական համալսարանների նման կատարեց մի շարք գործառույթներ, որոնցից առանձնացնելի են հետևյալները.

Ա) եթե եվրոպական համալսարանները կարևոր դեր խաղացին եվրոպական ազգերի միավորման, սոցիալական նոր խավի և համաեվրոպական մշակույթի ձևավորման, միասնական չափանիշներով գործող կրթական ու ուսուցման համակարգի ներդրման գործում, ապա հայ իրականության մեջ հայության մտավոր ուժերի համախմբման, գրագետների պատրաստման ու համահայկական կրթական միջավայրի ստեղծման գործը կատարեց միջնադարի Հայոց համալսարանը: Միջնադարյան համալսարանները, լինելով բանականության (գիտության) նկատմամբ վստահության խորհրդանշան, դարձան նոր խավի՝ գրագետների (ինտելեկտուալների) ձևավորման օջախ: «Universitas»-ը՝ որպես գիտնականների միավորում, համախոհների միություն, ձեռք բերեց յուրահատուկ սոցիալական կարգավիճակ՝ իր արժեհամակարգով, սոցիալական պատասխանատվությամբ ու բարոյական նկարագրով: Համալսարանականները ցույց տվեցին ոչ միայն իրենց գիտականությունը, համապարփակ ուսմունքներ ստեղծելու կարողականությունը, այլև իրենց միավորման իրական սոցիալական ուժը: Նրանք ձևավորեցին սոցիումը՝ ստեղծելով դրա ինտելեկտուալ ու իրավական բազան[3]: Այլ կերպ ասած՝ համալսարականները էական դեր խաղացին ոչ միայն գիտական մտքի, այլև հասարակության իրավաքաղաքական ու բարոյագեղագիտական մակար-

---

[1] Տե՛ս **Մաթևոսյան Ա.**, Հայոց միջնադարյան համալսարանը // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ «ԼՀԳ»), 1984, թիվ 1, էջ 70:

[2] Տե՛ս **Խաչերյան Լ.**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.), Երևան, 1973, **Գզոյան Ա. Ռ.**, Տաթևի համալսարանը, Երևան, 2003:

[3] Տե՛ս **Душин О. Э.**, Средневековые университеты: у истоков европейского высшего образования // “Вестник СпбГУ”, сер. 17, 2013, вып. 2, с. 31:

դակի բարձրացման գործում: Համալսարաններում ձևավորվեց գիտնականների, ուսյալ մարդկանց մի խավ, որին եկեղեցին վստահում էր ուսուցանելու և մեկնաբանելու Հայտնության ճշմարտությունները: Միջնադարի խոշորագույն սքոլաստիկ մտածողները՝ Ալբերտ Մեծը, Թովմա Աքվինացին, Ռոջեր Բեկոնը և այլք, կոչվում էին եկեղեցու դոկտորներ: Նմանապես հայոց մեջ եկեղեցու երևելի վարդապետներից էին Հովհան Որոտնեցին ու Գրիգոր Տաթևացին, որոնց հետագայում Հայաստանյանց առաքելական եկեղեցին դասեց սրբերի շարքում: Միջնադարյան Հայոց համալսարանը դարձավ հայության մտավոր ներուժի համախմբման և համահայկական կրթական կենտրոն: Բերենք այդ միտքը հաստատող մի քանի փաստ՝ ա) Գլաձորի և Տաթևի համալսարաններում ուսանում էին Հայաստանի և Կիլիկիայի հայկական թագավորության գրեթե բոլոր շրջաններից եկած ուսանողներ; բ) համալսարանների հիմնադիրներն ու նշանավոր ներկայացուցիչները սերում էին Հայաստանի տարբեր գավառներից, ներկայացնում էին տարբեր գիտակրթական դպրոցներ: Գլաձորի համալսարանի հիմնադիրն էր Ներսես Մշեցին, որը Մուշ քաղաքից էր, նշանավոր վարդապետ Վարդան Արևելցու աշակերտը, նրա հետևորդ Եսայի Նչեցին Սասունի Նիչ գավառից էր, Գլաձորի համալսարանի սան Հովհան Որոտնեցին Սիսական նահանգից էր, նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին՝ Գուգարքի նահանգի Թմկաբերդ ավանից և այլն; գ) համալսարանների շրջանավարտները կարևոր դեր խաղացին հայոց աշխարհի տարբեր վայրերում իրենց ջանքերով հիմնադրած դպրոցներում համահայկական միասնական չափանիշներով գործող կրթական ու ուսուցման համակարգի ներդրման գործում: Օրինակ, Գլաձորի համալսարանի շրջանավարտներ Մխիթար Սասնեցին հիմնեց Մեծոփա վանքի, Հովհաննես Արճիշեցին՝ Այրիձորի, Մատթեոս Մլիճեցին՝ Կողբի վանքի, Կիրակոս Երզնկացին՝ Երզնկայի, Ավետիս Հաղբատացին՝ Հաղբատի, Վարդան Կիլիկիացին՝ Կիլիկիայի Զորովանքի, Հովհաննես Քռնեցին՝ Քռնայի, Հովհաննես Ծործորեցին՝ Ծործորի դպրոցները[1]:

Եվրոպայում եկեղեցական ու աշխարհիկ իշխանությունների կողքին ձևավորվեց ինտելեկտուալների իշխանությունը, որի դերը հասարակության կյանքում գնալով մեծանում էր: Համալսարանները առաջադրեցին գիտելիքի ձեռքբերման, պահպանման ու ուսուցման և գիտության կազմակերպման, իշխանության ու մտավորականության փոխհարաբերության նոր ձևեր: Պետական իշխանությունը, գրում է ֆրանսիացի ականավոր պատմաբան Ժակ Լո Գոֆը, համալսարականների առկայությունը դիտում էր որպես հասարակական հարստություն[2]: Ի տարբերություն եվրոպական ինտելեկտուալների՝ պետականության բացակայության պայմաններում հայ գրագետների

---

[1] Տե՛ս **Մաթևոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 67-68:

[2] Տե՛ս **Ле Гофф Ж.**, Другое Средневековье. Время, труд и культура Запада, Екатеринбург, 2000, с. 129-130:

գործունեությունն ուներ ոչ այնքան սոցիալական ու պետական, որքան ազգապահպանական ուղղվածություն: Թեև հայ գրագետները լծակներ չունեին ազդելու օտարազգի իշխանությունների վրա, այդուհանդերձ այնքան մեծ էր նրանց դերը հայ ժողովրդի ներքին կյանքի կարգավորման ու կառավարման ոլորտում, որ հայազգի իշխանները, ի մասնավորի Օրբելյանները, հնարավորության սահմաններում աջակցում էին նրանց: Գրագետների հեղինակության մասին է վկայում այն, որ ժամանակակիցները հպարտանում էին Հայոց համալսարանով, օրինակ՝ Գլաձորի համալսարանը անվանում էին «երկրորդ Աթենք» կամ «պանծալի Աթենք», իսկ գիտակրթական գործունեությամբ աչքի ընկած ուսուցչապետերին ու աստվածաբան-իմաստասերներին մեծարում էին՝ նրանց վերագրելով պատվավոր («տիեզերալոյս վարդապէտ», «ոսկեբերան», «լուսատու մարգարիտ հայոց աշխարհի», «ախոյեան անպարտելի» և այլն) մականուններ: Օրինակ, վարքագիրը Տաթևի համալսարանի ուսուցչապետ Գրիգոր Տաթևացու մասին գրում է. «Նա դարձաւ Հայոց երկրորդ լուսավորիչը եւ որպէս աստուածաբան գերազանցեց բոլոր հին ու նոր իմաստասերներին եւ վարդապետներին»[1]: Իսկ նրա աշակերտ Մատթեոս Ջուղայեցին, թվարկելով Տաթևացու արժանիքները, գրում է հետևյալը. «Այլ և արար գիրս յոգնահիմաստք ընդդէմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայք. և արար զբանս խրատականս, և իմաստ և հանճարս, և իմաստնացոյց զազգս հայոց քան զամենայն ազգս, և ուղղեաց զկարգս և զսահմանս եկեղեցոյս»[2]:

Բ) Թե՛ եվրոպական համալսարանները և թե՛ հայոց համալսարանը դարձան գիտության կազմակերպման օջախ, գիտական հետազոտությունների, հումանիստական գաղափարների ստեղծման ու տարածման կենտրոն: Միջնադարում, հատկապես սքոլաստիկայի Ոսկեդարում, բարձրագույն դպրոցները և համալսարանները իրենց առջև խնդիր են դնում, որքան դա հնարավոր է, վերականգնել բնության ու հասարակության մասին մոռացված գիտելիքը: Դրան հասնելու մեթոդներից էր բնության, հասարակության/պետության, տրամաբանության, իրավունքի, բարոյականության և գեղարվեստի վերաբերյալ անտիկ մտածողների, Ս. Գրքերում և եկեղեցու հայրերի աշխատություններում տեղ գտած ճշմարիտ մտքերի հավաքումն ու մեկնաբանումը, ուսուցողական նպատակով դրանց օգտագործումը: Մասնագետների կարծիքով՝ միջնադարյան համալսարանների նման ծրագիրը կարելի է համարել գիտական «հումանիզմի» բարձրագույն աստիճան, քանի որ այն ենթադրում էր ոչ միայն աստվածային փրկչագործության իմաստի, այլև արարչագործության, Աստծու բնությանը և մարդուն վերաբերող կեցու-

---

[1] «**Երանելի եռամեծ սուրբ Գրիգոր Տաթևացի անյաղթ փիլիսոփայի եւ հայոց մեծ տիեզերալոյս վարդապետի վարքը**» // «Գանձասար», 1992, էջ 290:

[2] **Մատթեոս Ջուղայեցի**, Վարք Գրիգոր Տաթևացւոյ // Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. թիվ 6607, էջ 5բ:

թյան գերբնական ոլորտները ճանաչելու հնարավորությունը[1]: Պատահական չէ, որ սքոլաստիկական աստվածաբանությունը նմանեցնում են գոթական տաճարի հետ: Աստվածաբանությունը, գոթական տաճարի նման ներառելով որոշակի սկզբունքներով համակարգված տարաբնույթ գիտելիքներ, վեր է սլանում դեպի կեցության սկզբնապատճառն ու բարձրագույն նպատակը՝ Աստված: Իր հերթին գոթական տաճարը նման է սքոլաստիկական մտքի գագաթնակետ արարումներին՝ աստվածաբանական-փիլիսոփայական հավաքումներին, որոնց բնորոշ էին համընդգրկունությունը, կառուցիկությունը, կարգավորվածությունն ու աստիճանակարգությունը: Սքոլաստիկական մտածելառճը եվրոպական սքոլաստիկական գրականության տարածման շնորհիվ տիրապետող է դառնում նաև հայ գրագետների, հատկապես Տաթևի համալսարանի աստվածաբան-իմաստասերների շրջանում: Սքոլաստիկական ոճով էր գրված, օրինակ, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» երկը, որը, հեղինակի իսկ խոստովանությամբ, տարբեր աղբյուրների հիման վրա գրված հանրագիտարանային ու հավաքաբանական աշխատություն է. «Է ինչ ի սմա հւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն: Եւ է ինչ ի ներգործութեանց հոգւոյն Աստուծոյ շնորհաց, որ ծածկէ յիմաստնոց և յայտնէ տղայոց յիւրաքանչիւր ժամանակս ըստ կամաց իւրոց: Եւ թէ՛ այս և թէ՛ այն, դու ընկալ զխնդիր մտաց քո առանց ամենայն երկբայութեանց, իբր ի միոյ կենեղուտ աղբերէ կենաց ուռճալրացեալ և պտղաւէտեալ»[2]:

Եվրոպական համալսարաններում տիրապետողը սքոլաստիկան էր, որը գիտության կազմակերպման հաստատութենական ձև էր: Պատահական չէ, որ գիտությունն սկսեց զարգանալ այն երկրներում ու համալսարանական այն քաղաքներում, որտեղ ուժեղ էր սքոլաստիկան: Ավանդույթի ուժով դեռևս բացասական են արտահայտվում սքոլաստիկայի մասին, մինչդեռ միջնադարում սքոլաստիկայի ի հայտ գալը նշանակում էր աստվածաբանության և փիլիսոփայության, հավատի և բանականության փոխհարաբերության նոր մակարդակ, աստվածաբանության փիլիսոփայականացում և փիլիսոփայական գիտելիքի գործառութային նոր կարգավիճակ, իմացության սուբյեկտի գիտակցության մեջ յուրահատուկ հեղաշրջման սկիզբ: Եթե բանականության միջոցով հնարավոր է հիմնավորել Հայտնության ճշմարտությունները, ստեղծել «բանականացված հավատք», ապա նշանակում է, որ բանականությունը արժեքավոր գործիք է աստվածիմացության գործում, նշանակում է մարդը իր կարողություններով ի վիճակի է հասկանալու և մեկնաբանելու Հայտնության ճշմարտությունները: Այլ խոսքով՝ սքոլաստի-

---

[1] Տե՛ս **Саутерн Р. У**., Схоластический гуманизм и объединение Европы, т. I, Основы / пер. М. В. Семиколенных // http://turba-philosophorum.narod.ru/transl/Southern/Scholastic_Humanism_1/Contents.html/Մուտք՝ 5.12.2018/:

[2] **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 772:

կան, բարձրացնելով բանականության հեղինակությունը, միաժամանակ բարձրացնում է թե՛ աշխարհիկ գիտելիքների և թե՛ մարդու հեղինակությունը: Այսպիսով, սքոլաստիկան միջնադարյան աշխարհայեցողության մեջ սկիզբ է դնում յուրօրինակ մի «հեղաշրջման»՝ վերաիմաստավորում է բանականության (փիլիսոփայության, գիտության) դերը երկրային ու երկնային իրողությունների ճանաչողության գործում: Դրանով կարևորվում են Հայտնության ճշմարտությունների բանական հիմնավորումները, բնական ու սոցիալ-մարդաբանական երևույթների ուսումնասիրությունը, հետևանքներից (արարված իրերից) դեպի պատճառը (Աստված), մեթոդաբանությունը և այլն: Բնության ռացիոնալիստական, բանաքննական ուսումնասիրությունը ինքնանպատակ չէր, դրանով մարդը համոզվում էր, նախ, որ արարված աշխարհը բանական է, մտահասու, երկրորդ, որ բանականությամբ հնարավոր է ճանաչել աստվածային օրենքները, երրորդ, որ մարդը իր կարողականության սահմաններում բացահայտում է աստվածային արարչագործության գաղտնիքները, դրանով իսկ ավելի հասկանալի ու մերձավոր դարձնում Աստծուն, չորրորդ, որ մարդը փորձում է հասարակական-պետական կյանքը ու բարոյական ապրելակերպը բացատրել բանականության չափանիշներով: Ինչպես վերը նշվեց, լատին մտածողների՝ կաթոլիկ առաքյալների ջանքերով եվրոպական սքոլաստիկական ավանդույթը տարածվեց նաև Հայոց համալսարանում՝ նպաստելով գիտական մտքի աշխուժացմանը: Այս ամենով հանդերձ, սակայն, հարկ է նկատել, որ միջնադարյան Հայոց համալսարանում գիտությունը ուներ առավելապես գրքային, վերաշարադրական ու վերարտադրողական բնույթ. իրականությունն այնպիսին էր, որ նվաճողներից ավերված ու քայքայված երկրում, անիշխանության ու անապահովության պայմաններում գրագետներին զբաղեցնում էին ոչ թե կյանքի թելադրանքով բարձրացված զուտ գիտահետազոտական, այլ առաջին հերթին ինքնության պահպանմանն առնչվող տեսական խնդիրներ:

Գ) Եթե եվրոպական համալսարանները կարևոր դեր խաղացին թե՛ համաեվրոպական և թե՛ ազգային ինքնությունների ձևավորման ասպարեզում, ապա Հայոց համալսարանը՝ հայոց ինքնության հիմնասյունների՝ կրոնի, հավատքի, դավանանքի, լեզվի ու մշակույթի պահպանման գործում: Միջնադարում ազգությունը նույնացվում էր կրոնի, եկեղեցու և դավանանքի հետ, ուստի ազգի համախմբման հիմքը դիտվում է ոչ այնքան տարածքը, լեզուն և արյունակցական կապերը, այլ որքան հավատքն ու եկեղեցական ավանդույթը, այն է՝ դավանաբանությունը, ծեսերն ու արարողությունները: Հրաժարվել դրանցից նշանակում էր հրաժարվել նախնիներից փոխանցված հոգևոր ժառանգությունից ու ավանդույթներից, հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքներից, այն է՝ ազգային ինքնության հիմնասյուններից: Հրաժարումը, նրանց կարծիքով, որպես կանոն ուղեկցվում է սեփական ավանդույթի մոռացմամբ կամ անտեսմամբ, սեփական արժեքների թերագնահատմամբ կամ վատաբանությամբ: Թե ինչպես պետք է վարվել նման

դեպքում, հայ ավանդապահների համար գաղտնիք չէր, քանի որ պայքարի ձևերը ևս վաղուց մշակված էին. հավաքվում էին եկեղեցու առաջնորդներն ու երկրի իշխանները և վճռում, որ «պատրաստ ենք տանջանքների, աքսորի, բանտի և մեռնելու՝ հանուն սուրբ և առաքելական հայրերի ավանդների», կամ՝ Ստեփանոս Օրբելյանի պատկերավոր արտահայտությամբ՝ «համաձայն ենք մեր հայրերի հետ դժոխք իջնել, իսկ հույների հետ երկինք չբարձրանալ»[1]: Այս իմաստով համալսարանական ժամանակահատվածում միջկրոնական ու դավանաբանական հակամարտությունների սրումը, միաբարական-հակամիաբարական շարժումն անմիջականորեն կապվել են ազգային ինքնության խնդրի հետ: Ճիշտ է, հայոց եկեղեցին ուներ դավանաբանական պայքարի հարուստ փորձ, սակայն այս անգամ առաջացել էր նոր իրավիճակ. եվրոպական համալսարաններում կրթված լատին միաբարականները իրենց գործունեությունը կազմակերպում էին գիտակրթական օջախների միջոցով և շեշտը դնում Հայտնության ճշմարտությունների ու եկեղեցական դավանաբանության բանական/գիտական մեկնաբանության վրա՝ օգտագործելով սքոլաստիկական փիլիսոփայության զինանոցը: Այն է՝ ի տարբերություն նախորդ դարերի, այս փուլում կրոնադավանաբանական պայքարը ընթանում էր հաստատութենական մակարդակով (նկատի ունեմ գիտակրթական կենտրոնները) և ուներ ընդգծված ինտելեկտուալ ուղղվածություն: Ժամանակի ընթացքում հայ գրագետները կարողացան համարժեք պատասխան տալ միաբարականներին. նախ, հիմնադրեցին համալսարաններ, երկրորդ, իրենց դավանաբանական ու աստվածաբանական երկերը գրելիս օգտվեցին սքոլաստիկական փիլիսոփայությունից ու մեթոդաբանությունից, այսինքն՝ միաբարականների դեմ պայքարեցին իրենց իսկ զենքով[2]: Այս առումով իրենց գործունեությամբ միաբարական շարժման մտածողները ոչ միայն նպաստեցին հայ տեսական-փիլիսոփայական ու աստվածաբանական մտքի վերելքին, այլև յուրօրինակ ձևով խթանեցին ազգային փիլիսոփայական ավանդույթների վերածնումն ու վերակենդանացումը: Փաստորեն, կաթոլիկադավան մտածողները, անկախ իրենց ցանկությունից ու կամքից, հայ մտածողներին «հարկադրեցին» ավելի մեծ ուշադրություն դարձնել ազգային ավանդույթներին և արժեքներին: Բանն այն է, որ կրոնադավանաբանական պայքարում միաբարականները կաթոլիկ եկեղեցու առավելություններից մեկը համարում էին այն, որ «ճշտութեամբ ու գիտութեամբ յոյժ լցեալ է եկեղեցին Հռոմա. զի նման է աշտարակին Դաւթի յոյժ սպառազինեալ, այսինքն՝ ազգի ազգի գիտութեամբ՝ ի Սուրբ Գրոց և յարտաքնոց և

---

[1] **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմություն /թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Ա. Աբրահամյանի/, Երևան, 1986, էջ 361:

[2] Այդ մասին տե՛ս **Аревшатян С. С**., К истории философских школ средневековой Армении (14 в.), Ереван, 1980:

գրոց քաջ վարդապետաց»[1]: Հայ մտածողները չբավարարվեցին եվրոպական ավանդույթների յուրացմամբ, այլ սկսեցին վերաիմաստավորել նախորդ դարերի ազգային տեսական-փիլիսոփայական արժեքները և դրանք զուգակցելով, համադրելով ներմուծված արժեքների հետ՝ բարձրացրին մի նոր մակարդակի: Նրանք սկսեցին վերականգնել հայ տեսական-փիլիսոփայական ու աստվածաբանական ավանդույթները, շրջանառության մեջ դրեցին վաղուց թարգմանված Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Եվագր Պոնտացու, Գրիգոր Նյուսացու, Պորփյուրոսի, Նեմեսիոս Եմեսացու, Հովհան Դամասկացու, Կեղծ-Դիոնիսիոս Արեոպագացու և այլոց երկերը: Հայոց համալսարանը պատվով կատարեց իր ազգապահպան առաքելությունը և միարարական շարժման թուլացումից ու երկրում վաչկատուն ցեղերի ստեղծած խժդժությունների հետևանքով կյանքի պայմանների վատթարացումից հետո դադարեցրեց իր գոյությունը:

Сейран Закарян – ***Армянский средневековый университет***

В XIII-XV веках в европейских странах были основаны десятки университетов, которые существенно изменили облик европейской культуры. В этот период в Армении основали университеты, которые, продолжая научно-образовательные традиции средневековых армянских высших школ, под различными наименованиями, своеобразно продолжили свое существование около 150 лет (так как они своими истоками были связаны друг с другом, то используется выражение «Армянский средневековый университет» по А. Матевосяну). Как и европейские, Армянский средневековый университет выполнял ряд функций: а) если европейские университеты сыграли важную роль в деле объединения европейских народов, формирования нового социального слоя и общеевропейской культуры, в деле внедрения системы образования и обучения по единым критериям, то в армянской действительности роль в объединении умственных сил, в подготовке образованных людей (интеллектуалов) и в создании общеармянской образовательной среды сыграл Армянский средневековый университет, б) и европейские университеты, и Армянский университет стали центром организации науки: научных исследований, создания и распространения гуманистических идей, в) если европейские университеты значительно повлияли на формирование как общеевропейской, так и национальной идентичности, то Армянский университет сыграл важную роль в деле сохранения таких опор идентичности, как религия, вероисповедание, язык и культура. Хотя армянская церковь и имела богатый опыт церковной борьбы, однако, в противоположность предыдущим векам, на данном этапе борьба протекала на институциональном уровне и имела выраженную интеллектуальную направленность. Армянские интеллектуалы смогли дать равносильный ответ латинским проповедникам тем, что: во-первых, основали университеты, во-вторых, при создании своих философских и богословских сочинений воспользовались схоластической философией и методологией, то есть боролись против униатов их же оружием.

---

[1] **Բարդուղիմեոս Բոլոնիացի**, Քարոզգիրք // ՄՄ, ձեռ. թիվ 2184, էջ 12բ:

Seyran Zakaryan – *The Medieval Armenian University*

In XIII-XV centuries dozens of universities were founded in the European countries which essentially changed the portrait of the European culture. During that period some universities were also founded in Armenia, which continued their existence for about 150 years in original ways and different names (as they were genetically connected to each other, the expression "medieval Armenian university" is used following to A. Matevosyan) continuing the traditions of medieval Armenian higher schools. The medieval Armenian university fulfilled several functions like the European universities did, such as: a) if European universities played an important role in the unification of European nations, in the formation of a new social stratum and pan-European culture, in inserting educational and teaching system operating in a united criteria, in the Armenian reality the medieval Armenian university did the work of uniting the mental forces of Armenians, preparing literate people and creating the pan-Armenian educational environment. b) Both European and Armenian universities became the heart of science organization, the centre of creating and spreading scientific research and humanistic ideas. c) If European universities played an important role in the formation of both pan-European and the national identities, the Armenian university played a great role in saving the pillars of Armenian identity – religion, dogma, language and culture. Though the Armenian Church had rich experience in dogmatic struggle in this phase, as distinct from former centuries, the religious-dogmatic struggle continued on an institutional level and had an underlined intellectual direction. Armenian literate people were able to give an adequate answer to the Latin Unitarians. First of all, they founded universities. Secondly, they made use of scholastic philosophy and methodology while writing their dogmatic and theological works, i. e. they struggled against the Unitarians with their own weapon.

Ներկայացվել է 28.08.2019
Գրախոսվել է 03.09.2019
Ընդունվել է տպագրության 05.11.2019